# ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



*Էլինա ԹԵՎՈՍՅԱՆ*
*Պատմ. 3-րդ կուրս*

***Սիրում էի մենության վայրկյաններս լցնել բնության թովիչ մեղեդիներով, և որքա՞ն քաղցր էր օդդ ...***

Թախիծս կլանում և վերացնում էր արևդ: Հուշերս մնացին այն վերջին արևամուտի մեջ. արևը քո հանդեպ տածած սերս պոկեց և իր հետ մայրամուտին տարավ իր տաքուկ բնակարան, որպեսզի սերս չսարսափի օրրանս հրդեհի մեջ տեսնելիս, և փակեց իր տաք շողերով դռները, որ հոգիս դուրս չպրծնի, երբ տեսնի, թե ինչպես են խառնածին թափառականները պոկոտում իր երբեմնի դրախտավայր հիշեցնող ծաղկանոցը: Քանի անգամ եմ մտորումներս քամուդ հանձնել, սիրելի՛ս, քանի անգամ ես թախիծս սփոփել՝ ինձ նվիրելով եդեմական ծաղիկներդ:

Քամին նորից հետ կբերի երգերս, որոնք թաքցրել էի քո թանձր անտառների վիհերում, միայն թե խնդրում եմ, թույլ չտաս, որ քո նոր բնակիչների ականջներին հասնեն աստվածային լեզվով քեզ համար հյուսված այդ երգերը: Թող գաղտնիք մնա այն վայրը, ուր ես գիրք էի կարդում՝ փախչելով առօրյա աղմուկից: Եվ երբեք չմոռանաս՝ ես սիրում եմ քեզ, իմ տուն, իմ օրրան, իմ Արցախ: Եթե անգամ քեզանից մի քար մնա, ես մի օր, թեկուզ արդեն հարյուր տարեկան դարձած, հետ կգամ՝ քեզ փարվելու, իսկ այժմ հրաժեշտի արցունքներս թող բորբոքեն քո գրկում իմ սերը և մարեն թախծի հրդեհը, որպեսզի հոգիս չհրդեհվի հիմնովին և մնա ուժ՝ քեզ համար դարձյալ պայքարելու համար: Ես քեզ երբեք չեմ մոռանա: Արևն իր առաջին համբույրներն էր շռայլում երկնքի թանձրության մեջ հազիվ նշմարվող լեռներին: Ես փորձում եմ իմ պատկերը գտնել քո հորիզոնում, բայց հեռու ես դու այլևս: Ստի սահմանագիծը հատված է՝ արևը մատնել է խավարով թաքցված դեմքդ, արդարությունը: Անտակ ջրհորի խավարից բարձրացող պղպջակների նման հետ են գալիս հուշերը, որոնք լի են քո հորինվածքով, բայց որտե՞ղ կանգ առավ ժամանակը, ես որտե՞ղ կորցրեցի քեզ: Փորփրում եմ անցյալս, որ գտնեմ այն բանալին, որով փակվել է ապագա տանող ճանապարհիս դուռը: Լուռ է ամեն ինչ, բայց ականջներիցս չի ուզում պոկ գալ և հանգիստ թողնել այն փամփուշտի խլացնող ձայնը, որն ասես միշտ հետևում է ինձ և ուզում սպանել: Պատերազմը դեռ չի ավարտվել՝ այն շարունակվում է իմ ներսում, պատերազմը շարունակվում է քո կանչով... Ես նայում եմ քեզ, և արյունը եռում է երակներումս, քանզի ես քեզ չեմ թողել, քեզ խլել են ինձանից, պոկել են իմ սրտից ...

## ՊԱՅՔԱՐ

*Արահետից երիցուկի հոտ է գալիս,*
*Արահետը, որ այս անգամ էլի ճամփա դարձավ բազում ճամպրուկների ճռռոցի տակ,*
*սրտի դառը թմփթմփոցով, դեպի անհուն ուղի ընկնող, միշտ հետ նայող մեծ բազմության,*
*Դեռ չի հանձնել իր գոլորշին արևի էլ չտաքացնող բյուր շողերին:*
*Աշուն եկավ, բայց, ա՜խ, ինչու՞ այսպես մռայլ...*
*Աշուն եկավ, որ խենթ քամին տանի միայն չոր տերևները ծառերից,*
*ոչ թե տանի իր անողորմ թևի ներքո մեր հայրերին, որդիներին...*
*Քամին խառնել տերև, արցունք, խելակորույս ման է գալիս*
*ու մոտ բերում փոշին արկի մեռած հողում,*
*Արևն անգամ լաց է լինում,*
*Եվ աշխարհն այս անգամ կրկին կամաց տոնով դեպի երկինք է աղերսում՝*
*Ողորմիր, Տե՛ր, քո ցավաբեկ որդիներին:*
*Եվ կարոտից խաղաղության ժայռերդ են ճաքեր տվել մեր սրտերի պես ցավաբեկ,*
*Դու ծնվել ես, որ պայքարես հազարների խեղաթյուրած արդարության համար կարծես,*
*Դու օրրանն ես փյունիկների՝ մոխրից հավերժ կենդանացող,*
*Քեզ մահ չկա՝ դու ապրում ես միշտ անվարան վերքդ սրտումդ մխացող:*
*Քո սարերից մեր արյունն է գոլորշանում ամեն Աստծո լույս առավոտ,*
*Դու պե՛տք է ապրես, պե՛տք է հաղթես՝*
*Քեզ այլընտրանք չկա վաղուց,*
*Ժայռերիդ մեջ քարացել են հերոսներիդ հայացքները պատերազմող,*
*Դու կենդանի ուժն ես Աստծո, դեպի անմար լույսը ծախրող:*




«Քո ժամանակը»
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՁՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Հասմիկ Խաչատրյան,
լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

*Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:*
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

# Քո ժամանակը

№ 2
ՄԱՐՏ
2021

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ


# ԱՆՈՒՆՍ ԱՐՑԱԽ Է

***Թվում էր՝ ամեն ինչ լավ է, թվում էր՝ ես արդեն հասնում եմ երազանքիս, բայց...***

Ես Արցախն եմ, փոքրամարմին մի հայուհի, ով միշտ տուժվում է մյուսների կողմից: Չգիտեմ՝ ինչու բոլորն ինձ շատ են սիրում, և ես կարծես թե լինեմ մի նորածին մանկիկ, ում բոլորը սիրում են, ում ցանկանում են, որ միշտ գրկեն, որ իրենցը լինի, սիրեն և փայփայեն, խաղան նրա հետ, դարձնեն այդ նորածնին այն, ինչ իրենք են ցանկանում:Եվ այդ նորածնի նման ես էլ եմ կռվախնձոր եղել և հիմա էլ կամ:

Ես եկել եմ դարերի խորքից՝ դեռևս նահապետական դարաշրջանից: Գողտրիկ մի բնակավայր եմ լիառատ կանաչազարդ բնությամբ և տեսարժան վայրերով, օդս մաքուր է, իսկ հողս՝ կարծես թե իդեալական: Երևի հենց դրա համար եմ միշտ բոլորի դիտակետում եղել: Չգիտեմ՝ ինչու անցյալը միշտ մոռացվում է ապագայի քայլերից:Երբ ընկնում եմ հիշողությունների գիրկը, խելագարվում եմ անզորությունից: Հիշում եմ, թե ինչպես ինձ մաս-մաս արեցին, թե ինչպես էին թշնամիներս ապրում իմ կողքին, շնչում իմ օդը: Սովետական ընտանիքի անդամ էի: Երբ մահացավ ընտանիքի հայրը, բոլորս առանձնացանք և մի մասն էլ կրկին թշնամացավ: Սկսվեց իմ ընտանիքի բնաջնջման գործընթացը: Իմ անկրկնելի զավակները ոմն մի բարեկամի թեթև ձեռքով հայտնվեցին թշնամուս վերահսկողության տակ և փորձում էին զրկել նրանց իրենց ազգությունից, լեզվից, ուզում էին մոռացնել տալ անցյալը: Բայց այդ ժամանակ ուժեղ և խելացի էին մյուս զավակներս: Նրանք թև- թիկունք կանգնեցին իրար, խելք խելքի տվեցին և ետ բերեցին զավակներիս: Այդ օրվանից ի վեր տոն էր մեր օջախում, միշտ նշում էինք այդ բերկրալի հաղթանակը, հրավառություն կազմակերպում, չէ՞ որ զավակներս վերադարձել էին գերեվարությունից, եկել էին իրենց մոր կարոտը փարատելու:

Դժվար էր ինձ համար. փոխվել էին նրանք, վիրավորում ստացել: Եվ ես չընկճվեցի, հայ մոր նման բուժեցի նրանց, նորից դաստիարակեցի հայի ոգով, հայրենասիրություն ներշնչեցի, քաջություն սրսկեցի: Բոլորը սիրում էին զավակներիս, օգնում էին մեզ, որ ավելի կատարելագործվենք, դառնանք մեր երազանքների ընտանիքը:

Չեզ ծանո՞թ էր իմ թոռնուհին՝ Շուշիին աննման աղջիկն անձրևանոցով՝ մի այլ հմայք ու շքեղություն ունեցող Հունոտի կիրճը: Նա իր նրբագեղությամբ, յուրօրինակ տեսքով բոլորին իր շուրջն էր գրավում, բոլորը երկրպագում էին նրան: Իսկ իր եղբայրը՝ Կատարոտը, հայ տղայի արիությամբ սրսկված, միշտ թիկունք էր իր քրոջը: Բոլորը իրենց յուրահատկություն ունեին իմ ընտանիքում, առանց մեկի չկար մյուսը, համախմբված էին: Անցյալի դժվար օրերը արդեն հիշողություն էին, 30 տարվա վաղեմություն ունեցող ցավն ու կսկիծը կարծես թե մոռացվել էր, ու թվում էր, թե ամեն ինչ լավ է, թվում էր՝ ես հասնում էի երազանքիս, բայց...

Բայց ամեն ինչ մի վայրկյանում հօդս ցնդեց, որովհետև կյանքի փորձից դասեր չքաղեցի և թույլ տվեցի ընտանիքումս դավաճաններ հասունանան, որոնց պատճառով ես նորից մասնատվեցի, կրկին կորցրի զավակներիս, կորցրի ավելի շատ, քան նախկինում, նրանք նորից հայտնվեցին վաղեմի թշնամուս մոտ: Հողս նորից արյունոտվեց, գերեզմանաքարերը նորից շատացան, ցավս բորբոքվեց և հայտնվեցի մռայլ իրականության մեջ: Եվ դրա միակ մեղավորը ես եմ, ե՛ս, որ հույսս միշտ դրել եմ բարեկամներիս վրա, որոնք լավ ժամանակներում հիշում էին ինձ, բայց չէին ընդունում, խոսում էին, գովերգում, երգեր ձոնում,բայց հենց այն պահին, երբ ես ամենից շատն էի զգում նրանց կարիքը, ոչ մեկը ու ոչ ոք չկար:

➥ 2

➥ 1 Բոլորը շահամոլ էին, մոռացել էին ամեն մի բառ և կարծես թե ինձ չէին էլ ճանաչում: Դատապարտում էին մեղավորին, բողոքում, բայց ոչ մի քայլ չէին ձեռնարկում՝ կանգնեցնելու տանջանքն իմ: Մարմինս դղրդում էր, օդս չէր հերիքում, մեռնում էի ես՝ սպանելով ինձ հետ իմ զավակներին, բայց ոչ մեկին հետաքրքիր չէր: 44 օր տանջում էին ինձ, տանջում էին մինչ այն պահը, երբ սկսվեց մի լուռ տանջանք: Ես ինչպե՞ս պետք է ապրեմ առանց իմ զավակների, որոնց նորից ես կորցրի: Կրկին ես սգավոր դարձա, զրկեցին ինձ իմ թևերից, ես էլ չեմ կարող թռչել: Բայց գոնե վիրավոր սիրտն իմ սփոփում եմ այն մտքով, որ կարողանում եմ քայլել: Ճիշտ է, վիրավոր են մյուս զավակներս, որոնց ցավը խեղդում է, տանջում նրանց հոգեպես, բայց նրանք անկոտրուն են և դիմակայող: Եվ ես նրանց շնորհիվ նորից կարող եմ ասել, որ անունս Արցախ է և ես համառ եմ, ինչպես ոչ ոք, կմնամ կանգուն ու մարտնչող: Ես շուրջս եմ համախմբելու ողջ մնացած զավակներիս և միասին ասելու ենք համայն աշխարհին.

-Անունս Արցախ է, ես կամ և կլինեմ միշտ:

***Ալիսա ԴԱՎԱՅԱՆ,***
***մաթեմատիկա 4-րդ կուրս***

# ԱՆԱՐԵՎ ԳԱՐՈՒՆ

***Դաժան էր կռիվը, հազարավոր զոհեր տվեցինք, հող կորցրինք, մեր հայրենիքի մի մասն անցավ թշնամուն: Բայց հաղթել եք դուք, տղա՛ներ: Մեր հայրենիքի համար դարձաք անկոտրում պատնեշ, ձեր գարունները մնացին կիսատ, ձեր անունները հավերժ գրվեցին հերոս տղաների հուշամատյանում:***

Մենք հիմա ապրում ենք ձեր կյանքի գնով: Երդվում ենք անմար պահել ձեր հիշատակը, ձեր անօրինակ սխրագործությունների մասին պատմել սերնդեսերունդ: Քանի կան հայն ու Հայրենիքը, Ձեր անունները հիշվելու են դարերով: Գարնան արևի ժպիտն էլ չկա, որ Ձեզ փնտրենք այնտեղ: Արևն էլ է տխուր: Դաշտերի ծաղիկները ներկվել են Ձեր արյունով, մեր սիրտն էլ լցվել է Ձեր կարոտով:

Քանի՜ գարուններ մնացին հեռվում, քանի՜ արևներ մնացին ամպերի տակ, քանի մանուկ մնաց առանց հոր, քանի՜ կին մնաց առանց ամուսին, քանի՜ մայր մնաց առանց զավակի, քանի՜ ճակատագիր մնաց կիսատ, քանի՜ գարուններ գնացին անվերադարձ: Գարունն էլ գարուն չէ, կյանքն էլ կյանք չէ, արևն էլ չի ջերմացնում. ինչպե՞ս ջերմացնի, եթե այսքան սերունդների արյան գնով հարաբերական խաղաղություն ունենք. Երկինքն էլ խաղաղ չէ: Յուրաքանչյուրիս աչքերում խորը վիշտ կա թաղված, անբուժելի ցավ կա մեր սրտերում: Ապրում ենք մեր հերոս տղաների փոխարեն, նրանք են մեզ ուժ տալիս ապրելու: Ապրում ենք ֆիզիկապես, ապրում ենք պատերազմի վախով, ապրում ենք խորը վշտերի ծովում:

Դժվար է ինչ-որ բան գրել հիմա, հիմա, երբ վերջացել է 44 օր տևած մղձավանջը, բայց մենք դեռ երկար ենք զգալու այդ ցավը: Մենք այն տղաների հետ դադարեցինք ապրել, ովքեր հանուն հայրենիքի ընկան: Ժամանակը կագ է առել սրտիս զարկերի հետ միասին:

Գարունն անարև է, գարունը սպասված չէ, գարնան արևը էլ ջերմացնող չէ: Իմ սպասված գարունը դու ես, եղբա՛յր, և դու՛ք, մեր գարնան ծաղիկ դարձած հերոսներ:

Իմ եղբայրը՝ Անդրեյ Յուրիկի Ավագյանը, ծնվել է 1990 թ-ին Հադրութի շրջանի Տումի գյուղում: Ապրիլյան պատերազմի ժամանակ արժանացել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Իսկ այս պատերազմում՝ հավերժացավ: Կոչումով կապիտան էր: Ամուսնացած էր, երկու աղջկա հայր՝ մեկը երկու տարեկան, մյուսը՝ նորածին, որին այդպես էլ չտեսավ: Եղբայրս երկու տարեկան էր, երբ նրա հայրը պատերազմում զոհվեց, և պատմությունը կրկնվեց: Եղբայրս ապրեց ընդամենը 30 գարուն:

Եղբորս գլխավորությամբ խոնարհվում եմ մեր բոլոր զոհված տղաների հիշատակի առջև, նրանց հոգիներին հանգստություն, ննջեն խաղաղությամբ: Դուք հավերժ ներկա եք:

***Մարիամ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ,***
***Հ.լ. գ. 3-րդ կուրս***



# ԵՍ ՉԵՄ ԳԱԼԻՍ, ԴՈՒ ԳՆԱ

***Հայրենիքի նեցուկը դեռ մանկուց նրա հետ խաղացող իր զավակն է: Զավակներին հատուկ է անձնուրացությունը, երբ գալիս է հայրենիքի լինել-չլինելու օրհասական պահը: Նրանք չեն մտածում՝ գնա՞լ, թե՞ չգնալ, նրանք նետվում են առաջ՝ իրենց երակներում զգալով մայր հողի կանչը: Նրանցից շատերի արյունը շաղախվում է հայրենի հողին, և նրանք էլ սրբանում են հողի հետ...***

Նրանցից մեկն էլ Դավիթն է, ում մասին անցյալ ժամանակով խոսել չի լինում, որովհետեւ նրա կարծ, բայց իմաստալից կենսագրությունը միշտ ներկա է:

Դավիթ Համլետի Հովհաննիսյանը ծնվել է 2001 թ.-ի դեկտեմբերի 21-ին, Արարատի մարզի Մխչյան գյուղում: Սկսել է ծառայել Հադրութում, հուլիս-օգոստոս ամիսներին, դեռ մի քանի օրվա ծառայող էր, երբ սկսվեց պատերազմը: Չգիտեր պատերազմն ինչ է, բայց գիտեր, որ ավելի զորեղ էր՝ կանգնել ու կռվել մինչեւ վերջ, որովհետեւ հողի կանչը դա էր թելադրում: Շուշի համար մղվող մարտերին նա իրեն լավագույնս դրսևորեց և հենց այնտեղ էլ հերոսի պես զոհվեց: Չընկավ, այլ՝ հերոսացավ...

Դավիթի եղբոր՝ Արտյոմի հետ զրույցի ժամանակ նա պատմում է, որ դեռ մանկուց Դավիթի մեջ արտացոլված էր հայրենասիրությունը, սիրում էր հայրենիքի ամեն քարն ու թուփը: Նաեւ հպարտ էր, նեղացկոտ, միաժամանակ՝ ընկերասեր ու մարդասեր: Արտյոմի խոսքով՝ պատերազմի ժամանակ Դավիթը ոտքից վիրավոր մի զինվորի տեղափոխել է ապահով վայր՝ վտանգելով սեփական կյանքը: Զինվորը ողջ է և այժմ ստանում է համապատասխան բուժում:

Մոր հանդեպ առանձնահատուկ սեր էր տածում: Մայրը՝ Մելինեն, պատմում է, որ որդին իրեն հաճախ էր անակնկալներ մատուցում, ծաղիկներ էր նվիրում, սիրում էր նրան ուրախ տեսնել ու առիթը բաց չէր թողնում՝ մոր դեմքին ժպիտ նկարելու համար:

«Ամեն օր Դավիթիս փոշոտ կոշիկներն եմ համբուրում, շորերն եմ գրկում ու ագահորեն շնչում նրա բույրը, մտածում եմ՝ գոնե էդպես կարոտս կառնեմ, բայց չի ստացվում: Դավիթս շարունակում է ապրել հոգեպես, նա իմ սրտում միշտ կենդանի է, գիտեմ՝ չէր ցանկանա, որ ես տխրեի, սգայի նրա մահը, բայց կարոտը հաճախ այլ բան է թելադրում», -ասում է մայրը: Հորեղբոր տղան՝ Արմենը, պատմում է, որ Դավիթը սիրած աղջիկ ուներ. մի դասարանից էին, իրեն հասցրել էր պատմել այդ մասին, բայց աղջկան՝ ոչ: Գնաց՝ սերը սրտի մեջ պահած:

Արմենն ասում է, որ Դավիթը մարտի դաշտից մի կերպ հեռախոսային կապ էր գտել ու զանգել սիրած աղջկան, սակայն հեռախոսազանգին տատիկն էր պատասխանել, նա էլ ամեն անգամ ասել է, թե շփոթել է հեռախոսահամարը: Արմենն առանձնացնում է անսովոր մի բան՝ Դավիթի հուղարկավորության օրը կողք կողքի դրված երկու կալաներից «լացել է» այն մեկը, որը Դավիթն էր խնամում մինչ ծառայության անցնելը: Երևի բնությունն էլ էր սգում նրա մահը...

Ինչպես ասում են՝ ընկերությունը սովորաբար համարվում է ավելի ուժեղ միջանձնային հարաբերություն, քան որևէ այլ սոցիալ-հասարակական հարաբերություն: Ընկերության մեջ Դավիթն անկաշկանդ էր. եթե սիրում էր, ապա նվիրվում էր մինչեւ վերջ, կաներ ցանկացած գործ՝ ընկերներին ուրախություն պատճառելու համար: Դավիթի մանկության ընկերներից մեկի՝ Սահակի հետ զրույցի ժամանակ նա ափսոսանքով է խոսում ընկերոջ մասին: Պատմում է, որ ընկերական հավաքների ժամանակ Դավիթը հաճախ էր համեղ ուտելիքներ պատրաստում, միաժամանակ երգել-պարելով ուրախացնում իրենց: Հիմա էլ են ընկերներով հավաքվում, սակայն առանց Դավիթի ամեն բան այլ է, նա ներկա է լինում բոլոր հավաքներին՝ իր հետ կապված բազում պատմություններով:

«Ամեն օր քնում և արթնանում եմ այն սպասումով, որ կասեն՝ Դավիթը վերադարձել է: Թեկուզ տարիներ անցնեն, միևնույնն է, այդ սպասումը չի դադարելու», - ասում է Սահակը:

Դավիթի մարտական ընկերներից մեկն էլ այս երկխոսությամբ կիսվեց.

- Նահանջի հրաման է, Դավի՛թ:
- Գիտե՛մ :
-Արի՛, պետք է նահանջենք:

Խնամքով զինվորական բաճկոնը փռեց գետնին, պառկեց ու ասաց.

-Ես չեմ գալիս, դու գնա ...

Անմահացավ՝ մայր հողի կանչը ականջներում...

***Լանա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ,***
***լրագրություն առաջին կուրս***